

57

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԸՏ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 6 (97)

Ա. ԱԹԱՆԱՍՅԱՆ

ԱԹՆԱՆԱՅԱՆԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ



ԴԵՏԳՐԱՏ

1930


ՅԵՐԵՎԱՆ

23 AUG 2017

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԲԱՏ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՍՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 6 (97)

Ա. ԱԹԱՆԱՍՅԱՆ

ԱՇՆԱՆԱՑԱՆԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ



7653745

1930

3 6 9 6 4 4 2



Հրատ. № 1370

Գրառեպ. № 5476(1) Պատվեր № 794 Տիրաժ 4000

Պետհրատի յեկրորդ տպարան Յերևանում

1. ԽՈՋԱՆԱՎԱՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեզանում աշնանացան ասելով սովորաբար հասկացվում է ցանքի այն ձևը, յերբ հողի մշակությունը կատարվում է աշնանը՝ սեպտեմբեր 15—20-ը, վորից հետո անմիջապես վարած հողը ցանում են:

Այդպես է կատարվում աշնանացանը թե Հայաստանում և թե ամեն տեղ Անդրկովկասում:

Աշնանացանի այդ յեղանակը պետք է համարել պակասավոր, և անա թե ինչու:

Հայաստանի կլիմայական պայմանները աշնանացանի համար ամեն տեղ միանման չեն. մեր տաք և ջրովի դաշտավայրում ու նախալեռնային շրջաններում նախորդ տարվա ցորենի հունցքը վերջանում է հուլիսին, վորից հետո խոզանը մնում է ազատ և նրա վրա արածացընում են անասուններ:

Տրորելով խոզանները և արածելով նրա վրա մնացած ցորենների ու խոտերի մնացորդները, անասուններն իրանց վտանքով փոշիացնում են և ապա ամրացնում են արտերի հողը: Հողի այդորինակ ամրացման շնորհիվ նրա միջից

գործըշխանում, դուրս ե գալիս խոնավությունը, վորով և արտի մակերեսը 25—30 սանտիմետր խորութեամբ ավելի ու ավելի յե չորանում:

Այնուհետև աշնան սկզբին՝ սեպտեմբերին, յերբ մեղանում սկսում են խոզանները վարել աշնանացանի համար, գութանը հողը շուռ ե տալիս մեծ-մեծ քոսակներով և այնքան ամրացած ու չոր վիճակում, վոր նույնիսկ ամենալավ փոց-խերը չեն կարողանում այդ քոսակները ջարդել-մանրացնել: Նրանք նույն իսկ ցանքը ջրելուց հետո ել մնում են մեծ-մեծ կոշտերով: Նրա շուրհիվ անհնար ե լինում այդպիսի արտերում շարքացան մեքենա բանեցնել, շարքացան աշխատեցնել, իսկ շարքացանը դրանց վրա դառնում ե անհավասար, սերմերը տեղ-տեղ ընկնում են խիտ, իրարու մոտիկ, տեղ-տեղ սեհրակ, վորի հետևանքով ցանքը լինում ե անհավասար, վոչ միաժամանակ ու միատեղ:

Փորձերը ապացուցել են, վոր այդ կերպ մշակած աշնան ցանքը ջրելիս շատ ջուր ե պահանջում, շարքացանով մշակելը շատ զժվար ե լինում, շատ սերմ ե գնում, բերքն ել 10—12 տոկոսով քիչ ե ստացվում:

Այս բոլորից պարզ ե, վոր աշնանացանի այդ յեղանակը պետք ե փոխել և անցնել ավելի կատարելագործված յեղանակներով հողի մշա-

կության դաշտավորերում կամ նախալեռնային այն շրջաններում, ուր աշնանավարը ջրվում ե:

Հիմա քննենք աշնանացանը մեր այն շրջաններում, ուր հողերը չեն ջրվում: Որինակ, նախալեռնային այնպիսի շրջանները, ինչպես են Կոտայքի վորոշ տեղերը, Իջևանի, Բարսեղայի մի շարք գյուղերում, մեր լեռնային և բարձրագիւր Լոռին, Փամբակը Քյաֆթաուլին և Լենինականի մի քանի խոշոր շրջանները:

Այդ վայրերում աշնանացանը ջրելու սովորություն չկա, նախ այն պատճառով, վոր ջուրը քիչ ե և ապա, վոր սովորություն չկա: Դրանցից միայն մի քանի շրջաններում ե, վոր աշնանը մեծ մասամբ լինում ե խոնավ (Լոռի, Իջևան), անձրևները գալիս են իր ժամանակին և աշունն ել կարճատև ե, միայն շուտ ցանած արտերն են, վոր կարողանում են ժամանակին կանաչել ու արմատավորվել:

Նպատակահարմար ե արդյոք այդ շրջանների խոզաններում աշնանացանի վարը կատարել սեպտեմբեր-հոկտեմբերին, թե՞ պետք ե անել ավելի շուտ, և յեթե ավելի շուտ պետք ե վարել հողը—ինչու և յե՞րբ:

Մենք վերն արդեն ասեցինք, վոր յեթե դաշտավայրի խոզանների հողերը աշնանացանի համար վարում են սեպտեմբեր-հոկտեմբերին, և

խակույն ցանում, հողը այնքան չոր է լինում, այնքան ամուր, վոր նրա վարելը շատ է դժվարանում, իսկ վարելիս ստացվում են մեծ-մեծ քուսակներ:

Յեթե այդպես է մեր ջրաբեր գաղտավայրում՝ Արաքսի հովտում—արանում, ուր ջրելով հնարավոր է քոսակները փափկացնել ու մի կերպ ցանք կատարել—ապա մեր չոր, քարքարոտ նախալեռնային ու լեռնային շրջաններում վաղ աշնանավարը դառնում է ավելի դժվար, քուսակներն ավելի խոշոր են լինում և փոցխերով ու տափաններով դրանց ջարդելը, մանրացնելը իրանց նպատակին չեն հասնում՝ չջրվելու պատճառով:

Ահա թե ինչու այդ շրջաններում խոզանավարը սկսում են ուշ—հոկտեմբերին, յերբ այնքան անձրևներ են լինում յեկած, վոր կարելի չէ լինում այդ ամրացած ու չոր հողերում գութանավար անել, իսկույն ցանել, հուսալով, վոր հետագա անձրևների և տաք յեղանակների շնորհիվ, ցանածը կծլի, հողից դուրս կգա և մինչև ցրտերն ընկնելը կարմատակալի:

Սակայն, սովորաբար, այդ հույսերը չեն արդարանում: Աշնան յեղանակներն անցնում են չորային, առանց անձրևիների և գյուղացին ուղի-չուղի՝ խոզանը վարում է հոկտեմբերին, նո-

յեմբերին, այսինքն ցրտերն ընկնելուց մի յերկու շաբաթ առաջ:

Պարզ է, վոր ցորենը, գարին տարեկանը ընկնելով չոր և կոշտ հողի մեջ կամ չեն ծլում, կամ թե, յեթե ծլում են, նրանք ժամանակ չեն ունենում ամրանալ, լավ արմատավորվել: Ցրտերը մի քանի օրում հուպ են տալիս ծիլերին, և նրանք մեծ մասով փասվում են, ցրտահար լինում, վորից մեծապես փասվում է բերքը:

Այդպես է լինում, յերբ ուշ ցանած արտը սկսում է ծլել: Իսկ այն ցանքը, վորը թեև շուտ է վարված, բայց անձրև չի տեսել, այդտեղ սերմերը մնում են հողի մեջ, աշնանը բոլորովին չեն ծլում, ծլում են միայն գարնանը: Դրանց մեր գյուղացին անվանում է դոնդուրմա - այսինքն՝ չորացան:

Իսկ դոնդուրման — ամենաանկատար աշնանացանն է համարվում, վորովհետև ցանողը դրանով չի հասնում իր նպատակին—այն է՝ աշնանից ապահովել իր ցանքի լավ ծլումը:

Ուրեմն, պետք է փնտռել ու գործադրել աշնանացանի այնպիսի յեղանակներ, վորոնցով բոլոր պայմաններում կարողանանք ապահովել նրա լավ բերքը:

Վորոնք են այդ յեղանակները և ինչու այդ յեղանակներով ցանելիս ապահովում ենք արտի հաստատուն բերքը:

Ծանոթանանք դրանց հետ, վորովհետեւ մի-
այն այդ ծանոթութեան շնորհիւ է, վոր մենք
գյուղատնտեսական մեր աշխատանքները կդարձ-
նենք վոչ թե սոսկ մի արհեստ, այլ այն կկա-
տարենք դիտակցաբար, ըմբռնելով մեր աշխա-
տանքի ելութիւնը ու նրա նպատակը:

Միայն այդ ճանապարհով է, վոր մեր թե
անհատ գյուղացին, թե կոլեկտիվ մտած համայ-
նավար տնտեսը հնարավորութիւն կստանա իր
համար պարզել այն հիմնական հարցը, թե ին-
չու յե նա այսպէս անում և վոչ ուրիշ կերպ:

Մեր սակավահոգութեան պայմաններում,
նպատակ ունենալով վոչ մի թիւ հող առանց
ոգտագործելու չթողնել, մենք աշխանացանի շրջ-
աններում, աշխանացանի կամ գարնանացանի
բերքը հավաքելուց հետո ազատված հողամասը
պտորաստում ենք հաջորդ տարվա ցանքի հա-
մար:

Յեւ վորովհետեւ ամենից շուտ ազատվում
են հացահատիկների արտերը — այն է ցորենի,
գարու, հաճարի, վարսակի, կորեկի, յեզիպտա-
ցորենի և այլն, դրա համար ել աշխանացանը
անում ենք նախ և առաջ հացահատիկների հո-
ղամասերի վրա:

Մենք արդեն սկզբում ասեցինք, վոր այդ
հողերն ազատվում են հունձից հետո մոտավո-

րապէս հունիսին և հուլիսին՝ դաշտավայրերում
և նախալեռնային շրջաններում, իսկ ոգտատուն-
լեռնային գարնանացան շրջաններում:

Մեր լեռնային շրջաններում հացահատիկի
ցանքի մեծագույն մասը գարնանացան է, և մի-
այն դաշտային և նախալեռնային ջրովի շրջան-
ներում է, վոր աշխանացան է կատարվում: Վեր-
ջին յերկու տարիներում Լենինականի և Սևանի
ջրովի մի քանի շրջաններում (Դուզքենդ, Քավ-
թաուլ, Մարտունի) աշխանացանի փորձեր են
արվել և անսպասելի բավարար արդյունքներ
ստացվել:

Յեւ այսպէս, աշխանացանի տարածութիւնը
Հայաստանում տարեց-տարի ընդարձակվում է,
հետզհետե նա ընդգրկում է նաև լեռնային շրջ-
անները:

2. ԱՇԽԱՆԱՑԱՆԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխանացանը նախ նրանով է լավ, վոր աշ-
խանից ցանած սերմը հենց նույն աշխանը ծիլեր
է տալիս այնքան արմատակալած, վոր յերբ
ձմեռը նա ծածկվում է ձյունով, այդտեղ բույսի
զարգացումը կանգ չի առնում, այլ նա շարու-
նակում է դանդաղորեն աճել: Գարնանը շուտ՝
ձյունը հալելուն պէս, արտը ուժեղ կանաչում
է, ճյուղավորվում է հիմնավոր կերպով և նույն-

իսկ առանց ջրելու զարգանում ե: Դրանով ել պիտի բացատրել՝ Վոր աշնանացանի բերքը սովորաբար լինում ե ավելի հաստատուն և ավելի մեծ, քան գարնան ցանքը:

Յերկրորդ՝ յեթե գյուղացին իր գյուղատնտեսական աշխատանքները աշնանից ե անում, յերբ նա համեմատաբար ավելի շատ ազատ ժամանակ ունի, զրանով նա 50—60 տոկոսով թեթեւանում ե գարնան աշխատանքներից:

Յերրորդ՝ գյուղացու անասուններն ել աշնանը ավելի ուժեղ են լինում, ավելի կուշտ, քան գարնանը, յերբ նրանց կերը պակասած ե լինում՝ յերկարատե ձմռան ամիսներում վատ կերակրելու հետևանքով:

Թվածս այս յերեք պատճառներն ինքնին բավական են հիմնավորելու համար, թե ի՞նչու, յերբ պայմանները ներում են, հողագործին ավելի ձեռնտու յե ցանքն անել աշնանը, փոխանակ այն հետաձգելու գարնանը, յերբ ցեխը, անձրևներն, ուժասպառ յեղած անասունները խանգարում են նրան իր ժամանակին ու կատարյալ կերպով գարնան ցանքն անել:

Անշուշտ, սրանով պետք ե բացատրել, Վոր հողագործը իր աշխատանքների մի մասը աշնան կատարելու նպատակով, հարյուրավոր տարիների ընթացքում սերմերի վորոշ տեսակներ հար-

մարեցրել և ընտելացրել ե աշնանը ցանելու համար:

Դրանով ել մենք զանազանում ենք աշնանացան ցորենը, գարին և այլն գարնանացան ցորենների ու գարու տեսակներից և յերբեք զրանց իրար հետ չենք խառնում, մեկի փոխարեն մյուսը չենք ցանում, իսկ յեթե ցանելիս նրանք խառնվում են, ապա դրա հետևանքը մեծ մասամբ լինում են բացասական, զրանից լավ բերք չի ստացվում, իսկ ստացված բերքը լինում ե անհավասար, հուճճը հասնում ե զանազան ժամանակներում, սերմացուն լինում ե խառը և սերմելու համար անհամապատասխան այն պարզ պատճառով, Վոր զրանք Վոչ աշնանացան են, Վոչ ել գարնանացան:

3. ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՁՊԵՍ ՄՇԱԿԵԼ ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ՇՈՂԸ

Յեթե մենք մեծ քանակությամբ ազատ հողեր ունենք, կամ յեթե ամեն շրջանի համար հատուկ ցանքաշրջանառություն վորոշված լիներ, այն ժամանակ, պարզ ե, Վոր աշնանացանի համար հողի մշակությունը կլիներ ուրիշ կերպ, ուրիշ յեղանակներով և ուրիշ ժամկետներում: Բայց քանի Վոր Հայաստանում նրա տարբեր շրջանների համար դեռևս վերջնականապես ա-

ռանձին-առանձին ցանքաշրջանառութիւնն չի սահմանված, ուստի մեղանում աշխատացանի համար ոգտվում են այն հոգերից, վերոնք հենց նույն տարում հացահատիկ են յեղել ցանված:

Յեւ անա, հունձից հետո, նույն հողամասը հատկացվում է աշխատացանի համար, և կամ թե՛ մի սարի հողին հանգիստ է տրվում, վորպեսզի նա իրարու հետեից նույն տեսակի բույսեր մշակելու հետեանքով, ուժից չընկնի:

Այն արտը, վորի վրա հնձից հետո մնում է ցորենի, գարու, աճարի, վարսակի ցողունների ստորին մասը, այդ տեսակ արտը ժողովրդական լեզվով կոչվում է խոզան:

Ահա այդ խոզանն է, վոր 1—1½—2 ամիս (հուլիսից—սեպտեմբեր), տավար արածացնելուց հետո, գութաններով խորը վարում են, փոցխում, տափանում և աշխան ցորեն կամ գարի յեն ցանում ու ջրում:

Մենք արդեն ասեցինք, վոր մեզնում ընդունված աշխատացանի այդ յեղանակը շատ պակասավոր է, և բացատրեցինք թե ինչո՞ւ յե նա պակասավոր (հողի փոշիացում, անասուններ արածացնելիս՝ հողի պնդացում և չորացում):

Մեզ այժմ մնում է ցուց տալ, թր խոզանը վարելիս ինչպէս պետք է ամենից լավ կերպով մշակել հողը աշխան ցանքի համար, այսինքն

ցանքից անմիջապէս առաջ թե մի այլ ժամանակ:

Գտիական բազմաթիվ փորձերն ապացուցել են, վոր խոզաններն աշխատացանի համար մշակելու ամենից լավ յեղանակն այն է, յերբ ամառը, բերքը ժողովելուց անմիջապէս հետո փոխանակ այն արածացնելու, իսկույն բազմախոտիանի գութաններով վարում են 8—10 սանտիմետր խորութեամբ, փոխանակ 20—25 սանտիմետրի:

Ի՞նչ նպատակով է արվում այդպիսի նախավարը՝ բացատրենք:

Մենք արդեն ասեցինք, վոր հնձից հետո արտը ազատվելով իր վրա բուսած հացահատիկից և յենթարկվելով նրա վրա արածող անասունների վտատակման, հողը փշրվում է, փոշիանում և ապա ամրանում է: Դրա հետեանքով հողի միջից հետզհետե գոլորշիանում է և այն չնչին խոնավութիւնը, վորը գտնվում էր հողի մեջ նրա ներքին շերտում:

Յեթե մենք առանց այդ ել չորացած այդ հողը խորը վարենք, բնական է, վոր նա, գութանավարի հետեանքով շուռ գալով, ավելի և ավելի կչորանա սպառելով իր ներքին շերտերում ունեցած խոնավութիւնը, իսկ արտի մեջ մնացած ցորենի արմատներն իրենց վրայի ցողուններով շուռ գալով վերից-վար, ընկնում են վարած ար-

տի աղօսները այն խորքերը, ուր խոնավություն այլևս չկա: Ընկնելով այդքան խորը բուսական այդ մնացորդները մինչև ցանքի անելը չեն քայքայվում չեն փտում, ցանվելիք ապագա բույսի համար ամբողջովին սնունդ չեն դառնում:

Այնինչ, յեթե մենք հողի մեջ մնացած բուսական այդ մնացորդները, վորոնք մի հեկտարից 25—30 ցենտներ քաշ ունեն, կարողանայինք այսպես անել, վորպեսզի նրանք հենց այդ տարին քայքայվեյին և փտեյին, դրանով մենք աշնանը մեր ցանած բույսի համար վորոշ քանակությամբ սնունդ պատրաստած կլինեյինք, ուրեմն և նպատած նրա բերքատվության բարձրացմանը:

Յեւ վորպեսզի աշնանացան անելիս մենք հասնենք նաև այդ նպատակին, դրա համար, ինչպես վերն ասեցինք, հնձից անմիջապես հետո, խոզանը 8—10 սանտ. խորությամբ պիտի վարել բազմախոփ գութաններով և թողնել մինչև սեպտեմբեր:

Ի՞նչ արդյունք կստանանք դրանից:

Բազմախոփ գութաններով հողը յերեսանց վարելիս խոզան տեղում զանված բոլոր բույսերն իրենց ցողուններով, արմատներով մասամբ շուռ են գալիս և ընկնում են վարած հողի տակը 3—5 սանտ. խորությամբ, մասամբ ել ծածկում

են հողի յերեսը. դրանով նախ նրանք չեն թողնում, վոր հողի խոր շերտերը չորանան, ցամաքին և ապա գիշերները նրանք ողից ծծում են խոնավություն և պահում են իրենց մեջ: Յեւ յերբ այդ բանը կրկնվում ե հուլիսից մինչև սեպտեմբեր, 40—50 որ շարունակ, բույսերի այդ մնացորդները մի կողմից ծծած խոնավության, մյուս կողմից տաքության ազդեցության տակ, սկսում են հետզհետե քայքայվել և փտելու համար պատրաստվել և մինչև նոյեմբեր-դեկտեմբեր՝ աշնանը ցանած մեր բույսի համար 60—70 տոկոսով դառնում են սնունդ:

Ահա, թե ինչու ամառը խոզանը վարում ենք վոչ թե 20—25 սանտիմետր խորությամբ, այլ միայն 8—10 սանտիմետր, այսինքն ընդամենը 2—3 մատ հաստությամբ:

Այսպես արած վարը իսկական վարի միայն նախապատրաստությունն ե: Այս վիճակում արտը մնում ե մինչև սեպտեմբերի 5—10-ը, վորից հետո միայն մենք պետք ե այդ նույն հողը մեծ գութաններով խորը վարենք, փոցխենք և հետո միայն աշնանացան անենք:

Նկարագրածս յեղանակը խոզանների վրա կատարվող աշնանացանքի լավագույն նախապատրաստությունն ե, նա միշտ ել տվել ե և տալիս ե լավ արդյունք. դա, ինչպես փորձերն են ցույց տվել, տալիս ե 6-8 տոկոս ավելի բերք:

4. ԻՆՉ Ե ՆԱՏՈՒՄ ԱՅԴՊԻՍԻ ՎԱՐԸ

Բնական է, վոր ամեն ինչ հաշվող մեր գյուղացին կամ կոլխոզնիկը հարց տան՝ չե՞ վոր այսպիսի նախավարը իրենցից խելու յե ահագին ժամանակ և լսյն ել հունձի և կալսելու յեռուն շրջանում-հուլիս և ոգոստոս ամիսներին, յերբ նրանց համար ամեն մի ժամը թանկ է և յերբ գյուղում և անտեսության մեջ այդ ամիսներին ազատ ձեռքեր գրեթե չկան։ Յեվ հետո, յեթե նույն իսկ ազատ ձեռքեր ու յեզներ զանվեն ել, չե՞ վոր այդ նախավարը մի նոր և ավելորդ ծախք է գյուղացու անտեսության համար։

Յեթե այդպես է, կմտածեն նրանք, ուրեմն այդ աշխատանքը ավելորդ է, իսկ ծախքը ջուրը գցած ու անշահավետ։

Իհարկե, այն անտեսությունների համար, վորոնք վոչ ավելորդ աշխատող ձեռքեր և վոչ ել մանավանդ յեզներ ունեն, նախավարի աշխատանքը կապված է վորոշ զգալիությունների հետ, յեթե դա կատարում է ինքը՝ իր սեփական ուժերով ու յեզներով։

Բայց հարցը բոլորովին փոխվում է, յերբ գյուղացին հողագործական ընկերության անդամ է, և մանավանդ, յերբ նա կոլխոզի անդամ է։

Ինչո՞ւ։ Վորովհետեւ թե հողագործական ըն-

կերությունները և թե կոլխոզները իրենց հողերը մեծ մասամբ մշակում են մեքենաներով-տրաքտորներով կամ ձիա-յեզային կոլխոզանների միջոցով։

Յեվ ահա տրաքտորը կամ կոլխոզան է, վորին կցված հինգ, վեց տաս, տասնչորս խոփանի գութանը մի որում վարում է 6—10 հեկտար խոզան, առանց արտի տիրոջ կամ կոլխոզի անդամի անմիջական մասնակցության այդ աշխատանքներին։ Ուրեմն, այդպիսի մի տրակտորի համար մի հեկտար վաճը առառավելը մի ժամվա, կամ ընդամենը 1 ու 50 կ.—2 ուրլու գործե, այնինչ յեթե նույն աշխատանքը գյուղացին աներ իր յեզներով, իր աշխատավոր ձեռքերով նա պետք է մի հեկտարի վրա գործադրեր առնվազը յերկու ու, վորի արժեքը հավասար է 5—6 ուրլու։

Այս պարզ հաշիվները ցույց են տալիս, վոր յուրաքանչյուր մի աշխատավոր գյուղացու համար կրկնակի և յեռակի ձեռնատու յե մանկ հողագործական ընկերության կամ կոլխոզի մեջ։ Դրանով նա նախ մեծ ժամանակ է շահում և ազատ համեմատաբար ավելորդ ծախսերից ազատվում է։

Բացի կոլխոզներն ու հողագործական ընկերությունները, Սարգարադի մեքենատրակ-

1-265494

տորային կայանը, ունին հարույրից ավելի տրակտորներ, տասնյակ բազմախոփ գութաններ փոցխեր, փորոնք որական կարող են հազար հեկտար խոզանների նախավարը անել:

Բացի այդ Հայաստանի զանազան շրջաններում կան խորհրդային խոշոր տնտեսություններ, փորոնք նույնպես ունեն տրակտորներ ու բազմախոփ գութաններ, սրանք ևս կարող են և պատավոր են իրենց մեքենաներով ոգնություն գալ չքավոր և միջակ գյուղացուն, բատրակին, կոլխոզին հենց, փոր սրանք զիմեն զրանց և ցանկություն հայտնեն իրենց խոզանները աշխատանքանի համար նախավար անելու:

Այսպես, ուրեմն, մենք տեսնում ենք, փոր խոզանի նախավարի աշխատանքը վոչ դժվար է և վոչ ել մեծ ծախսերի հետ է կապված: Ուրեմն հենց այս տարի, այս ամառը մենք մեր ունեցած տրակտորներով ու զրանց կցած բազմախոփ գութաններով ու ափսեյավոր գութաններով կարող ենք տասնյակ հազար հեկտար խոզանատեղերի նախավար անելով, պատրաստել հենց այս տարվա աշխատանքանի համար:

5. ՆԱԽԱՎԱՐ ԱՆԵԼՈՒ ԱՄԵՆԱԼԱՎ ԺԱՄԱՆԱԿԸ

Խոզանները նախավար անելու ամենից նպաստավոր ժամանակը ամառն է, հնձից ան-

միջապես հետո: Ճիշտ է, այդ ժամանակ մեր թեկուխտները և թե անհատական տնտեսությունները զբաղված են հացահատիկները կալսելու աշխատանքով, սակայն տնտեսությունների յերկու այդ խմբերն ել կարող են նախավարի աշխատանքը հանձնել կամ իրենց միջից ընտրած մի հատուկ խմբակի, կամ յեթե կալսումը կատարում է մեքենադատագործական ընկերությունը՝ արտելը, այդ դեպքում միշտ ել անհատական տնտեսությունն ու կոլտնտեսությունն ունենալով ավելորդ տգատ ձեռքեր և տրակտոր, կարող են խոզանավարն անել հենց իրենց ուժերով:

Մեր դաշտավայրում՝ արանում հունձը զրեթե ամեն տեղ սկսվում է հունիսի կեսերից և տևում է մինչև հուլիսի վերջը, մոտավորապես մեկ ու կես ամիս: Ուստի, վորջան շուտ սկսվի խոզանավարը, այնքան լավ, վորովհետև արտի յերեսը խոզանավարից հետո ծածկված լինելով հողի բարակ շերտով, ինչպես արդեն ասվեց, իր մեջ կապահանի հողի մեջ յեղած խոնավությունը, առանց թողնելու, վոր նա ամռան արևի տաքություն տակ չորանա:

Մանավանդ մեծ նշանակություն ունի խոզանավարը նախալեռնային շրջաններում, ուր արտերը հնձվում են սկսած հուլիսի սկզբներից

և ավարտվում են Ոգոստոսի մեջ: Այս շրջաններում հողերը մեծ մասամբ անջրտի լինելու հետևանքով, ամենից ավելի կարիք են զգում խոնավության խնայողության դրա համար ել այս շրջանների խողանները, վորքան շուտ հերկվեն, այնքան քիչ կչորանան և այնքան ել շատ խոնավություն կպահպանեն իրենց մեջ:

Ահա, թե ինչու խողանավարի շուտ կատարելը աշնանացանի բերքատվության բարձրացման նախապայմաններից մեկը պետք է համարել, վորովհետև՝

ա) Հողը վորտ խորսւթյամբ մշակվում է ամառվանից, դրանով հեշտանում է աշնան վարի աշխատանքը քաշող ուժերի համար, հետևապես կատարվում է ժամանակին և ուժերի խնայողություն:

բ) Խողանն ամառը վարելով հողի մեջ գտնված խոնավությունը չի գոլորշիանում, հողը չի ցամաքում ու ճաքճաքում:

գ) Արտի վրա գտնված և շուտ աված բույսերի մնացորդները (խողանը, խոտերը, սրանց արմատները) հողի մեջ գտնված խոնավության և տաք յեղանակների ազդեցության տակ $1\frac{1}{2}$ -2 ամսվա մեջ այնքան են քայքայվում, վոր մասամբ դառնում են պատրաստի սննդանյութ ցանվող բույսի համար, վորը և փոխարինում է մի-քանի տասնյակ սալ գոմաղբի:

Իսկ այդ բոլորն իմի առած ոգնում են աշնանը ցանվելիք բույսի բերքատվությանը:

6. ԻՍԿԱԿԱՆ ԱՇՆԱՆԱՎԱՐ

Մենք տեսանք, վոր ամառվա խողանավարը գեոևա աշնանացանի իսկական վարը չէ, այլ հողի մշակության նախապատրաստական ու խելացի մի գործողություն:

Աշնանացանքի իսկական վարը Հայաստանում սկսվում է սեպտեմբերին և տևում է մինչև հոկտեմբերի վերջը: Այս վարը արվում է իր ամբողջ խորությամբ, և խողանավարի հակառակ ուղղությամբ, այս անգամ արդեն խորը վարելով:

Այս վարի խորությունը լինելու յե վոչ պակաս՝ 15—18 սանտիմ. այսինքն 5 մատի խորությամբ, յեթե միայն հերկվող արտի վերնաշերտը թույլ է տալիս, այսինքն յեթե այդ շերտը խորն է և ամբողջակի: Այդ դեպքում այս վարը կարելի յե անել ավելի խորը՝ 20—30 սանտ.: Դրանից մենք վոչ միայն փաստ հենք ունենա, այլ ընդհադառակը, կարող ենք միայն շահվել, վորովհետև վորքան խորն է մշակված արտի վերնաշերտը, այնքան խորը կգնան ցանվող բույսերի արմատները, այնքան այդ շերտը շատ ջուր կծծի և կպահպանի իր խորքերում: Դրա հետևանքով ել բույսերը կլիմանան յերաշտին ու

մեծ բերք կստանան: Դա պետք է անել այն շրջաններում, ուր ջրի սակավութիւնն կա կամ ուր ցանքը դեմի յե՝ անջրտի:

Աշնան խոկաւան վարը պետք է անել վոչ լայն շերտերով, այլ համեմատաբար նեղ շերտերով, քանի վոր այդպիսի շերտերը մանավանդ յեթե նրանք կավային ծանր հողից են, հեշտ են փշրվում, քայքայվում, քան հաստ ու լայն շերտերը, վորոնք մնում են մեծ-մեծ կոշտերով, ամուր քոսակներով:

Ավազային կամ ավազակավային հողերն ընդհակառակը, պետք է վարել համեմատաբար հաստ շերտերով, վորովհետեւ վտանգ չկա, վոր փոցխելիս այդ հողերն կարող են մեծ կոշտերով—քոսակներով մնալ: Այդպիսի հողերն ավելի շուտ և հեշտ են փշրվում ու քայքայվում, քան կավային ծանր հողերը:

Յեթե պատահում են հողեր, վորոնց վերնաշերտը բարակ է, հազիվ 10—15 սանտ. հաստութեամբ, և այդ վերնաշերտի տակ գտնվում են անմշակ, վատ վորակի հողեր ու քարեր, այդ դեպքում, իհարկե, պետք է խուս տալ հողը շատ խորը վարելուց, վորովհետեւ խոր վարելով տակից վեր է բարձրանում վատ հողը և զրանով վնասում է բերքին:

Այդպիսի տեղեր և այդպիսի հողեր Հայաս-

տանում շատ կան, մանավանդ նրա լեռնային և նախալեռնային շրջաններում:

Հենց այդ աչքի առաջ ունենալով մեր կոլխոզներն ու խ. տնտեսութեանները, վորոնք մեծ տարածութեամբ հողեր են մշակում, նախապես պետք է դուրսառնեն միջոցով և նրա մասնակցութեամբ լավ ծանոթանան հողերի հետ և ունենան իրենց հողերի քարտեզը:

Դա նրա համար է, վորպեսզի նրանք իրենց բոլոր հողերը միատեսակ գութաներով ու միևնույն խորութեամբ չվարեն այլ իմանան՝ թե իրենց, վոր հողն ի՞նչ հաստութիւն, ի՞նչ խորութիւն ունի, և զրա համաձայն գործածեն այդ հողին համապատասխան գութան և վարեն ավելի կամ պակաս խորը:

Ահա թե ինչու վտանգավոր է բոլոր հողերի համար անխտիր սահմանել մի խորութեան վար, քանի վոր պատահում է, վար կարելի յե և պետք է մի տեղ խորը վարել, իսկ մի ուրիշ տեղ ընդհակառակը, վարը պետք է կատարել յերես՝ ընդամենը 8—10 սանտ. խորութեամբ:

Մրանից յերևում է, վոր հողային քարտեզը դառնում է ամեն մի կոլխոզի, ամեն մի խորհրդային տնտեսութեան և գյուղի համայնքի համար, վոչ միայն ցանկալի այլ և պարտադիր:

Նույնը իհարկե պետք է աչքի առաջ ունենալ հող մշակող գործիքների, մանավանդ գութանների վերաբերյալ, վորովհետեւ միևնույն մար-

կայի և տեսակի գութաններով չի կարելի մշակել բոլոր տեսակի հողերը: Ամեն տեսակ հողի համար պետք է ունենալ նրան համապատասխանող գութան և փոքր:

7. ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ինչպես արդեն տեսանք Հայաստանում ամենահիմնական աշխանացան բույսը ցորենն է, ապա զալիս է գարին և հետո միայն տարեկանը — աշտրան:

Ցանքը մեղանում սկսվում է սեպտեմբերի յերկրորդ կեսից և տևում է մինչև ուշ աշուն — նոյեմբերի յերկրորդ կեսը:

Դաշտավայրերում, վերահզ աշունը յերկար է և տաք և ուր ցրտերն սկսվում են զեկտեմբերին և աշնան ցանքը, յեթե այն կատարվում է նույնիսկ հոկտեմբերի յերկրորդ կեսին, այդ զեպքում ջրած բույսը բավական ժամանակ է ունենում ծլելու, հողի տակից գուրս գալու, արմատավորվելու, ճյուղավորվելու և զեկտեմբերին ապահով կերպով ձյան տակ մնալու:

Այդպես չի նախալեռնային, մասնավորապես լեռնային շրջաններում: Այստեղ ցրտերը սովորաբար շուտ են ընկնում, ոչնչ է՝ հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբներին: Դրա համար ել ուշադրած աշխանացանը ժամանակ չի ունենում ծլելու, արմատակալելու և զեռ չծլած կամ նոր միայն ծլող ցորենի հատիկը, հանդիպելով վաղահաս ցրտերին, ցրտահար է լինում ու բերք չի տալիս:

Այդպես է Լենինականի, Քյաֆթուլուի, Սեփանի, Մարտունու, Սիսիանի գավառներում, ուր աշնան ցանք «Ուկրայնական» տեսակի ցորենը, վերը ցանվեց նոյեմբերի մեջ, ցրտահար յեղավ և վերջ ունեցավ փոշնչացավ:

Նման վտանգներից խուսափելու համար անհրաժեշտ է մոտավոր ճշտությամբ վորոշել, թե մեր վեր գոտիներում և յերբ է ցանքի համար ամենից լավ ժամանակը:

Մի շարք փորձերն ու դիտողությունները զալիս են ասելու, վոր դաշտավայրում, նրա ջրովի հողերում աշնան ցանքը կարող է տեղ մինչև հոկտեմբեր 25—31-ը: Յեվ վորքան շուտ սկսվի այն ու շուտ ել ավարտվի, այնքան լավ: Տաք, ջրովի այդ շրջանների համար աշխանացանի ամենից լավ ժամկետը պետք է համարել սեպտեմբեր 15-ից մինչև հոկտեմբեր 15—20, և կրտեի 30—35 որ:

Ինչ վերաբերում է նախալեռնային գոտու ջրովի տեղերին, այդ տեղերում աշնան ցանքը կարելի յե սկսել սեպտեմբերի 10-ից և շարունակել մինչև հոկտեմբեր 10-ը, այսինքն 30 որ

Գալով լեռնային բարձր շրջաններին այստեղ ամենից լավ է աշնան ցանքն սկսել սեպտեմբերի 1-ից և ավարտել մինչև հոկտեմբերի 5-ը, այսինքն 35 որվա մեջ: Իրանից ուշ արված: ցանքը որ-որի վրա դառնում է վտանգավոր, վորովհետեւ, ինչպես արդեն ասվեց, այդ տեղերում սովորաբար ցրտերն սկսվում են հոկտեմբերի յերկրորդ կեսից և ցանած ցորենը, գարին, տա-

րեկանը ժամանակ չեն ունենում ծելելու և արմատարորվելու, հետևաբար և փշանում են:

Այդպես են՝ Լենինականի դաշտը, Ախտայի, Ալափարսի, Սեանի բոլոր բարձր, հարթ մասերը, Սիսիանի, Փաշաքենդի, Համամուլույի և Լոռու գավառակները:

Այդ բոլոր տեղերում աշնան ցանքսը պետք է ավարտվի մինչև հոկտեմբերի հինգը, առ առավելին մինչև 10ը: Իսկ Սարգարաբադում, Սամադարում, Վերդիում, Քեշիշքենդում և Իջևանում աշնան ցանքը կարելի չէ կատարել մինչև հոկտեմբերի 15 - 20-ը:

Նախալեռնային ափսիսի շրջաններում, ինչպիսին են Մշոռալը, Կոռայքը, Թալինը — այստեղ սեպտեմբերին ավարտված ցանքը միշտ ել տալիս է լավ արդյունք:

Այսպես, ահա, աշնան ցանքի ճիշտ և ամեմենից նպատակավոր ժամկետներն ահագին նըշանակություն ունեն ապահով բերք ստանալու խնդրում, ուստի մեր կոլխոզները, խորհրդային տնտեսություններն ու գյուղական համայնքները պետք է աշխատեն ափսիս կարգավորել ամառվան և աշնան աշխատանքները, վորպեսզի ցանքն ըստ շրջանների հիշյալ ժամկետներից չանցնի, հետևապես չվտանգվի, ցրտահարության չյենթարկվի:

8. ՍԵՐՄԱՅՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ԸՆՏՐՈՒՅՑՈՒՆՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Մեծ բերք ստանալու առաջին պայմաններից մեկը, հողի լավ մշակելուց հետո, ցանքի հա-

մար նախապես ջոկած, ընտրած լավորակ սերմացուն է:

Միայն լավ սերմից կարելի չէ լավ բերք ստանալ, վատ, վտիտ, կեղտոտ, սերմը, նույնիսկ յերբ հողը լավ է մշակված, միշտ ել կտա վոչ բավար բերք:

Դրա համար ել սերմացույի նախապատրաստումը, նրա զտումը լավ բերք ստանալու համար մեծ նշանակություն ունի:

Ամեն մի գյուղացի ամեն մի կոլխոզ, յեթե նա տարբեր հողամասերում է ցանք արել, նկատած կլինի, վոր մի արտում ավելի լավ ցորեն, գարի յե բուսել, քան մի ուրիշ արտում:

Յեվ ահա աշնանացանի համար ուշագիր տնտեսը պետք է սերմացույի համար պահի ամենից լավ բուսած, ամենից մեծ բերք տված արտի սերմացուն:

Իայց այդ ել բավական չէ: Մենք գիտենք, վոր ամենից լավ արտի մեջ կարող են լինել վոչ միանման ու լավ հատկության ցորեն, գարի, տարեկան: Արտում մի մասը լինում է շատ լավ, մյուսը միջակ, իսկ մնացածները վատ:

Իացի դրանից, լավ բուսած արտը հնձելիս հասկերի հետ խառը հնձվում ու կարվում են նաև զանազան տեսակի մոլախոտերի սերմեր:

Լավ սերմացուն պետք է լինի միատեսակ լավ, խոշոր, ծանր և մաքուր:

Մեծ քանակութեամբ այգալիսի սերմ՝ առա-
նալու համար գոյութիւն ունեն հատուկ մեքե-
նաներ-սերմագործներ, արիւնքներ: Սերմացուն,
նախ քան ցանելը, այդ մեքենաներով պետք է
մաքրել ու գտել և ստացված առաջին կարգի
ցորենն ու գարին է, վոր պետք է ցանել, իսկ
մյուսները գործադրել ուտելու կամ վաճառելու
համար:

Սերմի ընտրութիւնը և լավ սերմացվով
արտեր ցանելը ագրոմիւնիմումի առաջին պա-
հանջն է: Նա թե գյուղատնտեսի, թե՛ կոլխոզ-
նիկի և թե ամեն մի յերկրագործի համար պետք
է դառնա որենք, անհրաժեշտ մի պայման:

Վոչ մի հատիկ սերմ չցանել առանց նա-
խապես գտելու, ահա թե ինչ է ասում այդ ո-
րենքը, վոր պետք է կատարեն բոլոր սերմացան-
ները, լինեն նրանք կոլխոզրկներ, թե անհատ
գյուղացիներ:

Բայց միայն սերմացուն գտելով չպետք է
բաժանահանար:

Հաճախ ամենալավ սերմացուն վարակված է
լինում սնկային մի փոշիով, վորից արտի մեջ,
մանավանդ խոնավ աւրիւններում, առաջանում է
մրիկը, վորի մեջը սև փոշի յէ: Սա աղալիս խառ-
նվելով ցորենի հետ, սեպնում է ամենաընտիր
ցորենը և իհարկէ ալյուրն ու թխվող հացը:

Ահա այդ մրիկն է, վոր պետք է փոշնաջ-
նել թե՛ սերմացույի միջից և թե՛ արտի միջից:

Իրան հեռացնել, փոշնաջնել կարելի չէ նա-
խապես սերմացուն ախտահանելով: Ախտահա-

նում են ֆորմալին կոշվող մի զեղով: Տաս զույլ
ջրին խառնում են 1 $\frac{1}{2}$ կիլո ֆորմալին, և այդ
լուծույթի մեջ թաթախելով նոսր պարկի մեջ
ածած սերմացուն, թողնում են նրա մեջ 3—5
բուլե, դրանից հետո հանում են ցորենը փռում,
չորացնում և ուղա միայն ցանում:

Այսպիսով ահա ֆորմալինի այդ լուծույթը
փոշնաջնում է մրիկի փոստակար փոշին և, ցա-
նելիս, արտում այլևս մրիկ գրեթէ չի առա-
ջանում:

Ահա սա յէ սերմացույի ախտահանումը,
վորն ագրոմիւնիմումի մյուս պահանջն է:

9. ԱՇՆԱՆԱՆՍՑԱՆԻ ԶՐԵԼՈՒ ԿԱՍ ԶԶՐԵԼՈՒ ՇԱՐՑԸ

Աշնանացանի ջրելու կամ չջրելու խնդիրը
կախված է նրանից, թե ցանքը ծլելուց և հետո
ածելու համար արդյոք ջրի պահանջ զգնւմ է,
թե՛ վոչ:

Այս հարցին, Հայաստանի բոլոր շրջանների
համար, չնչին բացառութեամբ, պետք է պատաս-
խանել այսպես, — այն բոլոր տեղերում ուր ջուր
կա և ուր հնարավոր է ցանքը ջրել, պետք է
ջրել, վորովհետև միայն ջրված արտումն է, վոր
ցանած ցորենը, գարին, տարեկանը շուտ են ծը-
լում, հողից հեշտութեամբ կերակուր են ստանում,
ծլածը արագ մեծանում է, արմատներ, ճյուղեր
և տալիս և այդ զրութեամբ էլ ձյան տակ են
մտնում:

Իհարկէ, այն բոլոր շրջաններում, ուր աշ-
նանը շատ անձրևներ են գալիս և ուր ողն ու

հողը բավարար խոնավ են, այդ տեղերում արտառ ջրերու կարիք չի գգում, ուստի և դրանց ջրերն ել ավերորդ ե, քանի վոր առանց ջրերու լել մի տաս որում ցանքը ծլում ե:

Բայց աշնանացանի այդպիսի շրջաններ հայաստանում քիչ են: Մեր շրջանների մեծ մասում աշունը չոր ե անցնում և տաք ե, ուստի աշնանացանի ջրելը դառնում ե անհրաժեշտ, պայմանով, վոր ջրելը կատարվի ցանեկուց անմիջապես հետո առանց ժամանակ կորցնելու:

Լենինականի, Դուզքենդի դաշտի փորձերը ցույց են տալիս, վոր շուտ ցանված և իսկույն ջրված «Ուկրայինկա» աշնան ցորենը տվել ե ամենաբարձր բերք, համեմատած ուշ ցանված և չջրված արտերի հետ, վորոնց մեծ մասը վոչընչացավ հենց այն պատճառով, վոր նա չեր ջրվել և ուշ եր ցանվել:

10. ՇՈՂԻ ԱՇՆԱՆ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Աշնանացանի նախապատրաստական աշխատանքներից մեկն ել արտերի պարարտացումն ե, գլխավորապես գոմաղբով:

Գոմաղբը, բացի այն վոր փափկեցնում ե չոր, կավային և կոշտ հողերը, նա միևնույն ժամանակ կարևոր սնունդ ե տալիս ցանածին և նպաստում ե, վոր նա աճի ու զարգանա: Պարարտացումը բարձրացնում ե բերքը 20—30—40 տոկոսով, նայած աղբի տեսակին և հատկությանը:

Հարկավոր ե միայն, վոր աղբը, իսկական

վարից առաջ, հողին տրվի, վորպեսզի նա զնա ցանվող բույսի արմատների տակ և նրան սնունդ տա:

Պարզ ե, վոր, վորքան հոգնած ե արտը, վորքան վատ ու աղքատ ե նրա հողը, վորքան նա պինդ ե, կավային ե կամ խճոտ, այնքան շատ գոմաղբ պետք ե ցրել արտի մեջ, և, ընդհակառակը, վորքան հարուստ ե արտի հողը (սեփհող), փխրուն ե ու հանգիստ, այնքան աղբի քիչ կարիք ունի նա: Համենայն դեպս լավ, սննդանյութերով հարուստ արտի մի հեկտարին պետք ե տալ 40—50 սալ, գոմաղբ միջակ հողին՝ 60—70 սալ, իսկ հոգնած պինդ ու քարքարոտ հողին 80—85 սալ աղբը բավական ե հողի հատկությունը լավացնելու և սննդատվությունն ու բերքը բարձրացնելու համար:

Այն տեղերում, ուր աղբը քիչ ե, կամ ուր այն գործադրում են վորպես վառելիք, մոխիրն ու զանազան թափթփուկները, տնային ու բակի աղբը, փողոցներից ու առուներից ժողված հողն ու մնացորդները կարող են վորոշ չափով աղբի տեղ ծառայել:

Այսպես ահա, հոգնած արտերի աղբերը վորպես նախապատրաստական աշխատանք, դառնում ե ագրոմիլինում, նա միաժամանակ դառնում ե նաև լավ բերք ստանալու նախապայմաններից մեկը և ամենից կարևորը:

Ամփոփենք վերև բերած բոլոր կարևոր կետերը, վորոնք վերաբերում են աշնանացանի նախապատրաստությանը:

Առաջին. — Աշնանացան կատարելու համար հողը և խոզանատեղերը պետք է վոչ խորը, յերեսից վարել ամառվանից:

Յեկրորդ. — Այդպես վարած հողը պետք է թողնել, վոր մնա մինչև աշնան սկիզբը:

Յերրորդ. — Սեպտեմբերի մեջ, իսկ ամենից ուշ հոկտեմբերի առաջին նախաժար արած արտը պետք է վարել մեծ զուխաններով և առաջինից յերկու անգամ խորը:

Չորրորդ. — Այս վարից անմիջապես առաջ, յեթե գոմաղբը կա, կամ նրան փոխարինող ուրիշ տեսակի աղբ՝ արտը պետք է աղբել:


Հիրգերորդ. — Սերմացուն պետք է մաքրել սերմագտիչ մեքենաներով և միայն զտած լավորակ սերմ ցանել:

Վեցերորդ. — Չտած սերմացուն պետք է ախտահանել ֆորմալինով:

Յոթներորդ. — Այն տեղերում, ուր վոռոգելու ջուր կա, աշնանացանը պետք է ջրել:

Յանաձր փոցխելու, նրան ցանելու և ջրելու յեղանակների մասին մենք չենք խոսում, վորովհետև զբանք վերաբերում են աշնան ցանքի աշխատանքներին և վոչ թե աշնանացանքի նախապատրաստությանը:

Հետեվանք. — Այսպես նախապատրաստած ու մշակած ցանքը բնիկացու առմամբ ապահովում է բերեացվորությունը յեվ բարձրացնում է այն 20—40 տկրով:



ՀՀ Ազգային գրադարան



NL0864345

ԳԻՆԸ 5 ԿՈՊԵԿ ՄԱՍ. (1 Ս

2654

1930թ.



Ա. ԱՏԱՆԱՅԱՆ

Подготовка к осенней севе

Госиздат ССР Армении
Эривань—1930